«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԾՐԱԳԻՐ

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2024թ.

Հատուկ նպատակների սույն ֆինանսական հաշվետվությունները սկզբնապես պատրաստվել են անգլերեն, իսկ այնուհետև թարգմանվել հայերեն՝ ընթերցողների հարմարության համար: Անգլերեն և հայերեն տարբերակների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Բովանդակություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ 4
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 5
1. Ընդհանուր տեղեկություններ 11
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ 12
3. Միջոցների մասհանումների հաշվետվություն (SOE) 14
4. Հատուկ հաշվի հաշվետվություն 14
5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 15
6. Դրամական միջոցներ 15
7. Ֆինանսավորում 16
8. Ծրագրային ծախսեր 16

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի («Նորք» ՏԿ) ղեկավարությունը պատասխանատու է «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի (որը ֆինանսավորվում է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի («ԿԶԵՀ») կողմից՝ 2022 թվականի մարտի 14-ին ստորագրված Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրի համաձայն («Դրամաշնորհի մասին համաձայնագիր»)) («Ծրագիր»)՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված <<Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով>> ՀՀՀՀՄ ստանդարտի (ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք):

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ «Նորք» ՏԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ:

«Նորք» ՏԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է նաև.

- Ծրագրի ողջ ընթացքում ներքին հսկողության արդյունավետ և հուսալի համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար;
- Պատշաճ հաշվապահական գրառումների վարման համար, որոնք բավարար են ծրագրի գործառնությունները արտացոլելու և բացատրելու համար, և որոնք թույլ են տալիս նրանց երաշխավորելու, որ ծրագրի վերաբերյալ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են «ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք»-ի և Դրամաշնորհի մասին համաձայնագրի պահանջներին;
- Ծրագրի ակտիվների պաշտպանության համար ողջամիտ, մատչելի միջոցների ընդունման և հաստատման համար, որ ստացված միջոցներն օգտագործվել են Դրամաշնորհի մասին համաձայնագրին համապատասխան տնտեսման և արդյունավետության նկատմամբ պատշաճ ուշադրությամբ և միայն այն նպատակների համար, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորում,
- Խարդախության և այլ սխալների կանխարգելման և բացահայտման համար:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ ստորագրվել են «Նորք» ՏԿ-ի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին:

Անահիտ Պարզյան	Աշխեն Ջանջուղազյան
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի Գործադիր տնօրեն	Ֆինանսական խորհրդատու

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2022 թվականի մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև ստորագրված Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրով («Դրամաշնորհի մասին համաձայնագիր») ֆինանսավորվող և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի («Նորք» ՏԿ) կողմից իրականացվող «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների միջոցների օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամարկղային հիմունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց մեր կարծիքը որակավորելու՝ մենք հղում ենք անում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային սկզբունքով, և արդյունքում դրանք կարող են հարմար չլինել այլ նպատակներով օգտագործման համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք» ստանդարտի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել **աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը** : Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված ծավալի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Դրամաշնորհային համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, «Նորք» ՏԿ-ի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

1. միջոցներն օգտագործվեն Դրամաշնորհի մասին համաձայնագրի պայմաններին համապատասխան և միայն այն նպատակների համար, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորումը:

Մեր կարծիքով, ««Նորք» ՏԿ-ի ղեկավարությունը բոլոր էական առումներով պահպանել է վերը նշված պահանջները 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

26 հունիսի 2024թ.
"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Աուդիտոր

		Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Ծնթ.	Հաշվետու տարի 31.12.2023 թ.	Ամբողջական առ 31.12.2023 թ.	Հաշվետու տարի 31.12.2023 թ.	Ամբողջական առ 31.12.2023 թ.	Հաշվետու տարի 31.12.2023 թ.	Ամբողջական առ 31.12.2023 թ.
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ							
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-				
Հատուկ հաշիվ (ԿԶԵՀ դրամաշնորհ)		262,718.07	-				
Ընդամենը		**262,718.07**	**-**				
Միջոցների աղբյուրները							
ՀՀ Կառավարություն		79,298.65	92,707.88				
ԿԶԵՀ դրամաշնորհ		218,000.00	518,000.00				
Ընդամենը	**7**	**297,298.65**	**610,707.88**				
Փոխարժեքի տարբերություններից օգուտ/վնաս							
ՀՀ Կառավարություն		(2,702.79)	(2,543.69)				
Ընդամենը		**(2,702.79)**	**(2,543.69)**				
Միջոցների օգտագործում							
Կատեգորիա							
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ համաձայն գնումների պլանի և Գործառնական ծախսեր		391,290.17	442,140.43	635,439.76	686,638.09	(244,149.59)	(244,497.66)
Ընդամենը ծրագրային ծախսեր	**8**	**391,290.17**	**442,140.43**	**635,439.76**	**686,638.09**	**(244,149.59)**	**(244,497.66)**
Դրամական միջոցների վերջնական մնացորդ							
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		2.41	2.41				
Հատուկ հաշիվ (ԿԶԵՀ դրամաշնորհ)		166,021.35	166,021.35				

Ընդամենը	6	166,023.76	166,023.76				

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում:

Անահիտ Պարզյան

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի Գործադիր տնօրեն

Աշխեն Ջանջուղազյան

Ֆինանսական խորհրդատու

Բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու տարի 31.12.2023 թ.	Ամողական առ 31.12.2023 թ.	Հաշվետու տարի 31.12.2023 թ.	Ամողական առ 31.12.2023 թ.	Հաշվետու տարի 31.12.2023 թ.	Ամողական առ 31.12.2023 թ.
Բաղադրիչ 1. Աշխատանքի բորսայի էլեկտրոնային հարթակի նախագծում, մշակում և ներդրում.	4,612.76	8,437.66	107,940.00	111,990.00	(103,327.24)	(103,552.34)
Բաղադրիչ 2. Տեխնիկական միջոցներով ապահովում	269,908.78	269,908.78	330,993.00	330,993.00	(61,084.22)	(61,084.22)
Բաղադրիչ 3. Աշխատանքի բորսայի էլեկտրոնային հարթակի մասին հանրային իրազեկում	-	-	84,840.00	84,840.00	(84,840.00)	(84,840.00)
Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում	116,768.63	163,793.99	111,666.76	158,815.09	5,101.87	4,978.90
Ընդամենը ծրագրային ծախսեր	**391,290.17**	**442,140.43**	**635,439.76**	**686,638.09**	**(244,149.59)**	**(244,497.66)**

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 26-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում:

Անահիտ Պարզյան

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի Գործադիր տնօրեն

Աշխեն Ջանջուղազյան

Ֆինանսական խորհրդատու

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. *Ծրագիր*

2022 թվականի մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) միջև կնքվել է Դրամաշնորհի մասին համաձայնագիր, որի համաձայն Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամը (ԿԶԵՀ) Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է դրամաշնորհ 518 000 ԱՄՆ դոլարի չափով:
Դրամաշնորհը տրամադրվել է «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի (Ծրագիր) իրականացման համար:
Դրամաշնորհի մասին համաձայնագրի (Հավելված 2) համաձայն Դրամաշնորհի վերջնաժամկետ է սահմանվել է 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

2022 թվականի դեկտեմբերի 22-ին Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի N ԿԶԵՀ-350 գրության հիման վրա դրամաշնորհի ժամկետը երկարացվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը, այնուհետև (N ԿԶԵՀ-558 առ 2023 թվականի հոկտեմբերի 25-ի գրության հիման վրա) այն երկարաձգվել է մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:

1.2. *Ծրագրի նպատակը*

«Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում գործատուների և աշխատանք փնտրողների համար ապահովել միասնական պետական առցանց հարթակ:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Աշխատանքի բորսայի էլեկտրոնային հարթակի նախագծում, մշակում և ներդրում.
Բաղադրիչ 2. Տեխնիկական միջոցներով ապահովում
Բաղադրիչ 3. Աշխատանքի բորսայի էլեկտրոնային հարթակի մասին հանրային իրազեկում
Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում:

1.3. *Ծրագրի բյուջե և ֆինանսավորում*

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԿԶԵՀ դրամաշնորհ՝ ծախսերի ֆինանսավորում 100%՝ բացառությամբ հարկերի:

Կատեգորիա*	ԿԶԵՀ դրամաշնորհ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
((1) Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ համաձայն գնումների պլանի և Գործառնական ծախսեր	518,000	518,000
Ընդամենը	**518,000**	**518,000**

*2023 թվականի օգոստոսի 22-ին Դրամաշնորհի մասին համաձայնագրում կատարված փոփոխության համաձայն կատեգորիաները և, համապատասխանաբար, բյուջեները միավորվել են՝ առանց ընդհանուր գումարը փոխելու:

- Հայաստանի Հանրապետության կառավարություն (ՀՀ կառավարություն)՝ հարկերի և այլ պարտադիր վճարների հետ կապված ծախսեր: Դրամաշնորհի մասին համաձայնագրում նման ծախսերի բյուջե չի նշվում:

1.4. *Ծրագրի իրականացում*

Դրամաշնորհի մասին համաձայնագրի համաձայն՝ ծրագրի ընդհանուր իրականացման պատասխանատվությունը կրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը հանդես է գալիս որպես Ծրագրի իրագործման խումբ («ԾԻԽ»), որը համակարգում և վերահսկում է Ծրագրի իրականացումը:

2022 թվականի հունիսի 22-ին ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջև ստորագրվել է համաձայնագիր «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» ծրագրի իրականացման և Կողմերի դերերն ու պարտականությունները սահմանելու վերաբերյալ:

«Նորք» ՏԿ-ի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0037, Կ. Ուլնեցու փ., տուն 68:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. *Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված »Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2. *Հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունք*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:

Դրամարկղային մեթոդի սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3. *Ներկայացման արժույթը*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4. *Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը Ծրագրի հաշվետու արժույթից տարբերվող արժույթն է:
Ծրագրի հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

Արտարժույթով գործարքները փոխակերպվում են ներկայացման արժույթով՝ օգտագործելով այդ գործարքների ամսաթի փոխարժեքները.

- Դոնորական միջոցների ներհոսքի համար օգտագործվում է ՀՀ գանձապետական համակարգում սահմանված և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտարժույթի առքի փոխարժեքը գործարքի օրվա դրությամբ:
- Դոնորական միջոցների արտահոսքի համար օգտագործվում է ՀՀ գանձապետական համակարգում սահմանված և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտարժույթի առքի փոխարժեքը գործարքի օրվա դրությամբ:
- ՀՀ համաֆինանսավորման արտահոսքերի համար օգտագործվում է ՀՀ գանձապետական համակարգում սահմանված և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված արտարժույթի միջին փոխարժեքը գործարքի օրվա դրությամբ:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթի շուկայում հրապարակված միջին փոխարժեքը կազմում էր՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 դրամ է:

2.5. *Բյուջե*

Տարեկան ֆինանսավորման և ծախսերի բյուջեները հիմնված են Դրամաշնորհի մասին համաձայնագրի կողմերի կողմից հաստատված ծրագրի բյուջեի վրա:

2.6. *Հարկեր*

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

3. Միջոցների մասհանումների հաշվետվություն (SOE)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ.

SOE	Վճարումների կատեգորիաներ	Ընդամենը
	(1) Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ գնումների պլանի համաձայն և գործառնական ծախսեր	
Ե1-2023	13,728.25	13,728.25
Ե2-2023	21,536.08	21,536.08
Ե3-2023	20,113.47	20,113.47
Ե4-2023	259,318.92	259,318.92
Ընդամենը	**314,696.72**	**314,696.72**

Միջոցների մասհանումների հաշվետվությունները (SOE) ներկայացվել են ԿԶԵՀ եռամսյակային կտրվածքով աուդիտի չենթարկված միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հետ միասին:

4. Հատուկ հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000910845
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Բանկի հասցե	Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն
Արժույթ	ԱՄՆ դոլար

	ԿԶԵՀ դրամաշնորհ	ԿԶԵՀ դրամաշնորհ
	2023 թ.	**2022 թ.**
1. Սկզբնական մնացորդ	262,718.07	-
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-	-
3. ԿԶԵՀ կանխավճար/հաշվի համալրում	218,000.00	300,000.00
4. Նվազեցում. Հատուկ հաշվից ԿԶԵՀ փոխհատուցում	-	-
5. Հատուկ հաշվի վրա կանխավճարի ընթացիկ մնացորդը	**480,718.07**	**300,000.00**
6. Հատուկ հաշվի վերջնական մնացորդ	166,021.35	262,718.07
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	314,696.72	37,281.93
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են Հատուկ հաշիվ)	-	-
9. Ընդամենը կանխավճարներ	**480,718.07**	**300,000.00**
10. Վերջնական անհամապատասխանություն (5)-(9)	-	-

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն պատրաստված է հաշվեգրման հիմունքով, որտեղ գործառնությունները ճանաչվում են տեղի ունենալու պահին (այլ ոչ դրամական միջոցների ստացման կամ վճարման պահին):

	Ծնթ.	31.12.23թ. ԱՄՆ դոլար	31.12.22թ. ԱՄՆ դոլար
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	6	166,023.76	262,718.07
Ընդամենը ակտիվներ		**166,023.76**	**262,718.07**
Պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր		-	-
Ընդամենը պարտավորություններ		**-**	**-**
Աճողական եկամուտ			
ԿԶԵՀ դրամաշնորհ	7	610,707.88	313,409.23
		610,707.88	**313,409.23**
Աճողական ծախսեր			
Ծրագրի ծախսեր	8	442,140.43	50,850.26
		442,140.43	**50,850.26**
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(վնաս)		**(2,543.69)**	**159.10**
Ընդամենը զուտ ակտիվներ		**166,023.76**	**262,718.07**

6. Դրամական միջոցներ

	Բանկ	Արժույթ	31.12.2023թ. ԱՄՆ դոլար	31.12.2022թ. ԱՄՆ դոլար
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	2.41	0.00
Հատուկ հաշիվ (ԿԶԵՀ դրամաշնորհ)	Գանձապետարան	ՀՀ դրամ	166,021.35	262,718.07
Ընդամենը			**166,023.76**	**262,718.07**

7. Ֆինանսավորում

7.1 ԿԶԵՀ դրամաշնորհ

	2023 թ.	2022 թ.	Ամբողջական առ 31.12.2023 թ.
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կանխավճար	218,000.00	300,000.00	518,000.00
Միջոցների մասհանումների հաշվետվություններ (SOE)	-	-	-
Ընդամենը	**218,000.00**	**300,000.00**	**518,000.00**
Ֆինանսավորման ընդհանուր բյուջե			518,000.00
Տրամադրված ֆինանսավորման տոկոսը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ			**100%**

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարություն

	2023 թ.	2022 թ.	Ամբողջական առ 31.12.2023 թ.
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
ՀՀ կառավարության համաֆինանսավորում	79,298.65	13409.23	92,707.88
Ընդամենը	**79,298.65**	**13,409.23**	**92,707.88**
Ֆինանսավորման ընդհանուր բյուջե			**N/A**
Տրամադրված ֆինանսավորման տոկոսը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ			**N/A**

8. Ծրագրային ծախսեր

8.1 *Ծրագրի ծախսերը ըստ ֆինանսավորման աղբյուրների*

Ծախսային հոդված	2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		
	ԿԶԵՀ դրամաշնորհ	ՀՀ կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ գնումների պլանի համաձայն և գործառնական ծախսեր	314,696.72	76,593.45	391,290.17
Ընդամենը	314,696.72	76,593.45	391,290.17

8.2 *Ծրագրի բյուջեի կատարում*

Ծախսային հոդված	Համախառն ծախսեր 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ընդհանուր բյուջե	Կատարում
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
(1) Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ գնումների պլանի համաձայն և գործառնական ծախսեր	351,978.65	518,000.00	68%
Ընդամենը	351,978.65	518,000.00	68%